

ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի կողմից 2014 թվականին կատարված աշխատանքների վերաբերյալ տեղեկատվություն.

Հաշվետու ժամանակահատվածում բաժնի կողմից իրականացվել է քաղաքացիների ամենօրյա ընդունելություն: Անհրաժեշտության դեպքում հերթագրվել են մարզպետի, մարզպետի տեղակալների և աշխատակազմի ղեկավարի մոտ ընդունելության:

Մարզպետի մոտ տարբեր հարցերով ընդունելության մասնակցել են 776 քաղաքացի, համապատասխան վարչությունների և բաժինների պետերին տրվել են հանձնարարականներ քաղաքացիների բողոքների և խնդիրների պարզաբանման նպատակով: Մարզի և Հանրապետական ՁԼՄ-ների տեղեկատվական թողարկումներում էթեր հեռարձակված և տպագրված բնակչությանը հուզող հարցերի վերաբերյալ ամենօրյա տեղեկատվություն է ներկայացվել մարզպետին, մարզպետի տեղակալին և աշխատակազմի ղեկավարին, ինչպես նաև թեժ գծով ստացված քաղաքացիների բողոքների կապակցությամբ տրվել են համապատասխան հանձնարարականներ: Պատրաստվել և ՁԼՄ-ներին մշտապես ներկայացվել է մարզպետի ուղերձները, շնորհավորանքները, աշխատակազմի վարչությունների և բաժինների կողմից ներկայացված հայտարարությունները, ինչպես նաև այլ կարգի հեռարձակման անհրաժեշտ նյութեր:

Պատրաստվել են տեղեկանքներ, հաշվետվություններ, զեկուցագրեր, ուղերձներ, թարգմանություններ և այլ գրություններ:

## **2) Մարզպետի կողմից քաղաքացիների ընդունելության կազմակերպում**

ՀՀ Շիրակի մարզպետի կողմից քաղաքացիների ընդունելության գործընթացն ամբողջությամբ իրականացվել է «Տեղեկատվության ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ կետի և ՀՀ Շիրակի մարզպետի 2008 թվականի հուլիսի 28-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանում քաղաքացիների ընդունելության կազմակերպման կարգը հաստատելու մասին» թիվ 187 որոշմամբ սահմանված կարգի դրույթներին համապատասխան:

2014 թվականին ՀՀ Շիրակի մարզպետի մոտ կազմակերպվել և անցկացվել է թվով 779 քաղաքացիների ընդունելություն, որից 713-ը ՀՀ Շիրակի մարզպետարանում, իսկ 66-ը Ախուրյանի, Արթիկի և Անիի տարածաշրջաններում կազմակերպված արտագնա ընդունելությունների ընթացքում:

Քաղաքացիների ընդունելության կազմակերպման կարգն օրենքով սահմանված կարգով տեղադրված է մարզպետարանի պաշտոնական կայքէջում և փակցված է մարզպետարանի տեղեկատվական ցուցատախտակին: Քաղաքացիների արտագնա ընդունելությունները

կազմակերպվել են ինչպես համայնքների ղեկավարների կողմից նախապես հրապարակված հայտարարությունների և կազմված հերթագրման ցուցակների համապատասխան, այնպես էլ Շիրակի մարզպետի տարածաշրջաններ չնախատեսված այցելությունների ժամանակ:

Քաղաքացիների ընդունելությունների ընթացքում բարձրացված 779 հարցերից 21-ը վերաբերվել են բնակարանային խնդիրներին, 30-ը՝ աշխատանքի տեղավորման, 138-ը՝ առողջապահական տարբեր խնդիրներին, 545-ը՝ դրամական աջակցության և 45-ը այլ հարցերին:

Քաղաքացիների ընդունելության ժամանակ բարձրացված հարցերի և ՀՀ Շիրակի մարզպետարան ստացված դիմումների հիման վրա ՀՀ Շիրակի մարզպետի կողմից մարզի թվով 545 քաղաքացու տրամադրվել է ֆինանսական օգնություն: Ամանորի և Սուրբ Ծննդյան տոների կապակցությամբ Շիրակի մարզպետի կողմից դրամական աջակցություն է տրամադրվել արցախյան ազատամարտում զոհված ազատամարտիկների, զինվորական ծառայության ընթացքում զոհված (մահացած) զինծառայողների թվով 608 ընտանիքների, ինչպես նաև Հայրենական Մեծ պատերազմի թվով 115 վետերանների:

Ընտանիքի տարվա կապակցությամբ Շիրակի մարզպետի կողմից դրամական և նյութական տարբեր աջակցություն է ցուցաբերվել նաև բազմազավակ ընտանիքներին: Համատեղ ֆինանսավորման արդյունքում զոհված ազատամարտիկների 50 ընտանիքների անդամներ 7 օրյա հանգիստ են անցկացրել Սև ծովի ափին:

### **3) Մարզպետի կողմից կատարված աշխատանքների հանրային իրազեկում**

2014 թվականի հունվարի 10-ին ՀՀ Շիրակի մարզպետը տեղական և հանրապետական լրատվամիջոցների ներկայացուցիչների մասնակցությամբ մամուլի ասուլիսով հանդես է եկել 2013 թվականին կատարված աշխատանքների, արդյունքների և 2014 թվականին նախատեսվող ծրագրերի հաղորդմամբ:

2014 թվականի փետրվարի 25-ին կայացած առաջին մարզխորհրդի նիստից հետո 2014 թվականին նախատեսվող ծրագրերի վերաբերյալ մամուլ ասուլիս է հրավիրվել տեղական և հանրապետական ՁԼՄ ներկայացուցիչների մասնակցությամբ:

15.05.2014թ. Ընտանիքի օրվա կապակցությամբ ասուլիս ՁԼՄ ներկայացուցիչների հետ, Գյումրեցի Դիլանյանների բազմազավակ ընտանիքում:

21.06.2014թ. Ասուլիս տեղական և հանրապետական լրատվամիջոցների ներկայացուցիչների մասնակցությամբ Շիրակի մարզպետի և „Բանակ-Ընտանիք», ծրագրի շրջանակում իրականացված ՀՀ ՊՆ 5-րդ բանակային կորպուսի հրամանատարության հետ, կազմակերպած անակնկալի կապակցությամբ/Շիրակի մարզի 47 զինծառայողների հանդիպումը ծնողների հետ/:

10.06.2014թ. Տեղական և հանրապետական լրատվամիջոցների ներկայացուցիչների մասնակցությամբ ասուլիս Շիրակի մարզպետի հետ հերթական մարզխորհրդի նիստի ավարտից հետո, կիսամյակի ամփոփում:

29.07.2014թ. Տեղական և հանրապետական լրատվամիջոցների ներկայացուցիչների մասնակցությամբ ասուլիս տեղի ունեցած աննախադեպ կարկտահարությունների հետևանքների վերացման վերաբերյալ:

28.08.2014թ. Տեղական և հանրապետական լրատվամիջոցների ներկայացուցիչների մասնակցությամբ ասուլիս դպրոցների տնօրենների Օգոստոսյան խորհրդաժողովից հետո:

11.11.2014թ. Տեղական և հանրապետական լրատվամիջոցների ներկայացուցիչների մասնակցությամբ ասուլիս Հոռոմի խաչմերուկում տեղի ունեցած ողբերգական ավտովթարի կապակցությամբ:

25.12.2014թ. Տարեվերջյան ամփոփիչ ասուլիս մարզխորհրդի նիստի ավարտից հետո, տեղական և հանրապետական լրատվամիջոցների ներկայացուցիչների մասնակցությամբ:

**3) Մարզպետարանի կայքէջում տեղադրվել են 2014 թվականին անցկացված մարզի խորհրդի բոլոր 4 նիստերի օրակարգերը և նիստերի արձանագրությունները:**

Մարզի խորհրդի նիստերին հրավիրվել են մարզային և հանրապետական զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչներ: Մարզի խորհրդի բոլոր նիստերը լուսաբանվել են զանգվածային լրատվության միջոցներով:

**3) 2014 թվականին ՀՀ Շիրակի մարզպետի կողմից ընդունված 355 որոշումները և արձակած 141 կարգադրություններն ամբողջովին և սահմանված ժամկետներում տեղադրվել են մարզպետարանի կայքում:**

Մարզպետարանի կայքէջում ամբողջությամբ և ողջամիտ ժամկետներում տեղադրվել են ՀՀ Շիրակի մարզպետի գործունեության 2014 թվականի տարեկան և ընթացիկ հաշվետվությունները, ՀՀ Շիրակի մարզի 2014-2017 թվականների սոցիալ-տնտեսական զարգացման և ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի 2014 թվականի աշխատանքային ծրագրերը:

Հանրային իրազեկման նպատակով ապահովվել է ՋԼՄ-ների մասնակցությունը մարզպետարանի աշխատակազմի կողմից կազմակերպված միջոցառումներին, մարզի խորհրդի նիստին, տրամադրելով նրանց անհրաժեշտ տեղեկատվություն:

Մարզպետարանի կայքէջում մշտապես տեղադրվել է տեղեկատվություն և պարբերաբար կատարվել համապատասխան փոփոխություններ, տեղադրվել են մարզպետի որոշումները, կազադրությունները, ինչպես նաև համայնքների ղեկավարների ու ավագանիների որոշումները:

Մարզխորհրդի նիստերի օրակարգը նախապես տեղադրվել են մարզպետարանի ինտերնետային պաշտոնական կայքէջում, նիստերին մասնակցելու համար մշտապես տեղեկացվել են մարզում գործող, ինչպես նաև հանրապետական լրատվամիջոցների բոլոր ներկայացուցիչները: 2014 թվականին տեղի է ունեցել չորս մարզխորհրդի նիստ /25.02.2014թ, 10.06.2014թ, 11.07.2014թ 26.12.2014թ/: Աշխատակազմի վարչությունների և բաժինների պետերի կողմից պարբերաբար կազմակերպվել են հարցազրույցներ ՋԼՄ-ների ներկայացուցիչների հետ՝ մարզպետարանի աշխատանքային ծրագրերը լուսաբանելու նպատակով: Ս/թ հունվարի 10-ին Շիրակի մարզպետը հանդիպել է մարզում գործող լրատվամիջոցների ներկայացուցիչների հետ: Բաժնի աշխատակիցները մասնակցել են միջազգային և հասարակական կազմակերպությունների կողմից կազմակերպված կլոր սեղան քննարկումներին, սեմինարներին և այլ միջոցառումներին, աջակցել այդ

կազմակերպությունների կողմից միջոցառումների անցկացմանը և իրականացվող ծրագրերին: Բաժնի աշխատակիցները մասնակցել են միջազգային և հասարակական կազմակերպությունների կողմից կազմակերպված կլոր սեղան քննարկումներին, սեմինարներին և այլ միջոցառումներին, աջակցել այդ կազմակերպությունների կողմից միջոցառումների անցկացմանը և իրականացվող ծրագրերին: /11.03.2014թ/-մասնակցություն «Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» ՀԿ-ի կազմակերպված «Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» միջոցառմանը, /21.05.2014թ/-մասնակցություն Գյումրու „Փյունիկ,, և „Արմինե,, կրթամշակութային հկ-ների կազմակերպած „Շնորհալի նկարիչ,, փառատոնի շրջանակներում միջոցառմանը: /02.06.2014թ/ - մասնակցություն <Հայկական Կարիտաս> ԲՀԿ-ի Գյումրու <Փոքրիկ իշխան> կենտրոնի կազմակերպած միջոցառմանը: /11.06.2014թ/- մասնակցություն Գյումրիում ՌԴ Գլխավոր հյուպատոսարանի կազմակերպած ՌԴ Անկախության օրվան նվիրված միջոցառմանը: /04.07.2014թ/- մասնակցություն <<ECORYS>> կազմակերպության տեխնիկական աջակցության թիմի կողմից ներկայացված տարածքային զարգացմանը ուղղված ծրագրի շնորհանդեսին: /08.09.2014/- մասնակցություն Հայաստանի Հանրապետությունում “Ռուսահամագործակցության” ներկայացուցչության կազմակերպած գիտաժողովին՝ նվիրված Առաջին Համաշխարհայինի 100 ամյակին: /23.09.2014թ/ - մասնակցություն „ՕԲՄՎԱՄ” հայաստանյան գրասենյակի և Եվրոմիության ֆինանսավորմամբ կազմակերպված «Պարենային անվտանգության բարելավում» ծրագիր միջոցառմանը:/15.10.2014թ/- մասնակցություն ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակի կազմակերպած Հայաստանի 2005-2013թթ զարգացման արդյունքների գնահատում (ԶԱԳ) միջոցառմանը: /12.11.2014թ/- մասնակցություն Հայաստանում Եվրոմիության պատվիրակության կազմակերպած “ԵՄ Արևելյան գործընկերության տարածաշրջանային համագործակցության ծրագիր” միջոցառմանը: /11.12.2014թ/- մասնակցություն «Մեղվիկ» ՀԿ-ում ԱՄՆ-ի ՄԶԳ-յան «Մաքուր էներգիա և ջուր» էներգաարդյունավետության բարելավման ծրագրի ավարտին նվիրված միջոցառմանը: Բաժնին աջակցել է մարզ այցելող պատվիրակությունների ընդունելության կազմակերպմանը և ըստ անհրաժեշտության՝ այցելությունների լուսաբանմանը: ՀՀ Շիրակի մարզպետը աշխատանքային և ճանաչողական հանդիպումներ է ունեցել ՀՀ-ում Լիտվայի արտակարգ և լիազոր դեսպան Էրիկաս Պետրիկասի հետ /11.03.2014թ/, Ասիական զարգացման բանկի կողմից ՀՀ-ում իրականացվող ծրագրի ներկայացուցիչ Սեզար Լոուրենսի հետ /20.03.2014թ/

,<<Հայջրմուղկոյուղի>> ընկերության գլխավոր տնօրեն Պատրիկ Լորենսի հետ /07.05.2014թ/, Տրանսիայի Լին քաղաքից Գյումրի ժամանած հոգեբույժ-մասնագետների հետ /12.05.2014թ/, Գյումրու <<Ավստրիական մոր և մանկան հիվանդանոցի >> հովանավոր պրոֆեսոր Գյունտեր Պետերի հետ /15.05.2014թ/, ՀՀ-ում ԱՄՆ-ի փոխդեսպան Վուդվորդ Քլարկ Փրայսի հետ /29.05.2014թ/, <<Արյա Տեքս>> կարի արտադրամասի հովանավոր-բարերար Մասիս Ներսիսյանի հետ /05.06.2014թ/, <<ԵԱՀԿ >> երևանյան գրասենյակի ուստիկանական գծով փորձագետ Դեյվիդ Այենսոնի հետ /16.06.2014թ/, ՀՀ-ում <<Ռուսպետհամագործակցության>> ներկայացուցչության ղեկավար Մարկ Կալինինի հետ /26.06.2014թ/: ՀՀ-ում Բելառուսի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան պարոն Ս.Ն.Սուխորենկոյի հետ /02.07.2014թ/: Ավստրիայի արտաքին գործերի նախարար Սեբաստիան Կուրցի հետ /09.09.2014թ/: ՀՀ-ում Ղասախստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան պարոն Այիմդոս Բոզժիգիտովի հետ /24.10.2014թ/: ՀՀ-ում Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության արտակարգ և լիազոր դեսպան տիկին Քեթրին Ջեյն Լիչի և ՀՀ-ում Գերմանիայի արտակարգ և լիազոր դեսպան պարոն Ռայներ Սորելի հետ /30.10.2014թ/:

ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի  
տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի  
բաժնի պետ`

Ս.Գրիգորյան